Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018թ.
սեպտեմբերի 19-ի N1230-Ն
որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը՝ **ՀՀ պետական եկամուտների կոմիտե**
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը՝ **929-Ա**
3. Անունը, ազգանունը,զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման վայրը՝ **Հունգարիա՝ Բուդապեշտ**
5. Գործուղման ժամկետները՝ **22.09.2026-25.09.2026թթ.**
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ **ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցների հաշվին**

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը _____
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)

(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

☑ ա.փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Էդուարդ Հակոբյան*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	էկոնոմ դաս	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	201,773.00	**201.77**
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	USD 138.00	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	50,140.92	
	Օրերի քանակը	3	
	Ընդամենը (դրամ)	150,422.00	**150.42**
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	USD 84.00	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	30,520.56	
	Օրերի քանակը	4	
	Ընդամենը (դրամ)	122,082.00	**122.08**
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		-
	Մուտքի արտոնագրի վճար		-
	Այլ ծախսեր (*նկարագրել*)		-
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		**474.28**	**474.28**

Գլխավոր ֆինանսիստ _____ ԴԱՎԻԹ ՄԱՐԵՎՈՍՅԱՆ 29.09.2026թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2026 թվականի սեպտեմբերի 22-25-ը

Հունգարիայի Բուդապեշտ քաղաք գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

- Էդուարդ Հակոբյան - ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահ:

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Հունգարիա, Բուդապեշտ քաղաք, սեպտեմբերի 22-25-ը:

3. Հրավիրող կողմը՝

Հարկային մարմինների ներեվրոպական կազմակերպություն:

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր մասնակցել Հարկային մարմինների ներեվրոպական կազմակերպության (ՀՄՆԿ) Գործադիր խորհրդի նիստին:

5. Քննարկված թեմաները՝

2026թ. սեպտեմբերի 22- ից 25-ը կայացած ՀՄՆԿ Գործադիր խորհրդի նիստի շրջանակում քննարկվել են մի շարք հարցեր, այդ թվում՝

- ՀՄՆԿ 2028–2032թթ. նոր ռազմավարության մշակման գործընթացը,
- ՀՄՆԿ գործունեությանը Դիտորդների մասնակցության կարգը վերանայելու հարցը,
- Հարկային կազմակերպությունների ցանցի (NTO) հետ փոխըմբռնման հուշագրի (MoU) նախագծի հաստատման վերաբերյալ հարցը,
- Հարկային խարդախության ռիսկերի հայտնաբերման նպատակով SS գործիքների և վերլուծության նպատակով IOTA Digital Collaboration Lab-ի մեկնարկի վերաբերյալ հարցը,

- ՀՄՆԿ 2026-2027թթ. աշխատանքային ծրագրի գործունեության՝ 2026թ-ին նախատեսվող տեխնիկական միջոցառումների, այդ թվում՝ 7-րդ ամենամյա միջազգային համաժողովի, ինչպես նաև 2027թ. համար նախատեսվող միջոցառումների վերաբերյալ հարցերը,
- ՀՄՆԿ քարտուղարության միջազգային համագործակցության և քարտուղարության այլ գործունեությանն առնչվող հարցեր,
- ՀՄՆԿ 2027թ. Գլխավոր համաժողովի ձևաչափի, տևողության և կառուցվածքի վերաբերյալ հարցեր,
- Այլ հարցեր:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

ՀՄՆԿ Գործադիր խորհրդի նիստի շրջանակում քննարկվել են ՀՄՆԿ Գործադիր խորհրդի և նախագահության առաջնահերթություններն ու գործողությունների ծրագիրը 2026-2027թթ. ժամանակահատվածի համար, ՀՄՆԿ նոր՝ 2028–2032թթ. ռազմավարության մշակման գործընթացի մեկնարկման հարցերը՝ հաշվի առնելով նաև ՀՄՆԿ Գործադիր քարտուղարի պաշտոնավարման ժամկետի ավատրի և նոր Գործադիր քարտուղարի ընտրություն կազմակերպելու հնարավորության հարցերը: Քննարկվել են նաև ՀՄՆԿ 2027թ. 31-րդ Գլխավոր համաժողովի կազմակերպման ձևաչափի, տևողության և կառուցվածքի, ինչպես նաև համաժողովի շրջանակում ՀՄՆԿ անդամ երկրների հարկային մարմինների ղեկավարների մակարդակով կլոր սեղան կազմակերպելու և ռազմանավարական քննարկումներ իրականացնելու հնարավորությունը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

ՀՄՆԿ Գործադիր խորհրդի նիստի շրջանակում ընդունվել են մի շարք որոշումներ, այդ թվում՝

- ՀՄՆԿ Գործադիր խորհրդի 2026–2027թթ. վարչական միջոցառումների օրացույցի և ՀՄՆԿ Գլխավոր համաժողովի անցկացման ամսաթվերի հաստատում: Որոշման համաձայն՝ ՀՄՆԿ Գործադիր խորհրդի հերթական

նիստն անցկացվելու է 2027թ. փետրվարի 23-24-ին Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքում, իսկ 2027թ. մայիսի 11-12-ին նախատեսվող հերթական նիստը՝ Ֆինլանդիայի Հանրապետության Հելսինկի քաղաքում:

Որոշման համաձայն՝ ՀՄՆԿ 31-րդ Գլխավոր համաժողովն անցկացվելու է 2027թ. հունիսի 22-24-ը Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետությունում, որի ընթացքում ՀՄՆԿ Նախագահությունը ստանձնելու է Հայաստանի Հանրապետությունը:

- Հարկային կազմակերպությունների ցանցի (NTO) հետ փոխըմբռնման հուշագրի (MoU) նախագծի հաստատում,
- Հարկային խարդախության ռիսկերի հայտնաբերման նպատակով SS գործիքների և վերլուծության նպատակով IOTA Digital Collaboration Lab-ի մեկնարկի հաստատում,
- ՀՄՆԿ գործունեությանը Դիտորդների մասնակցության նոր կարգի հաստատում,
- ՀՄՆԿ 2027թ. Գլխավոր համաժողովի ձևաչափի, տևողության և կառուցվածքի հաստատում:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

ՀՄՆԿ Գործադիր խորհրդի նիստի շրջանակում.

- քննարկվել են ՀՄՆԿ 2026թ-ին նախատեսվող տեխնիկական միջոցառումների, այդ թվում՝ 7-րդ ամենամյա միջազգային համաժողովի, ինչպես նաև 2027թ. համար նախատեսվող միջոցառումների ծրագիրը,
- քննարկվել է ՀՄՆԿ գործունեության 2026թ. աշխատանքային տարվա բյուջեն,
- Որոշվել է ՀՄՆԿ Գործադիր խորհրդի առկա ձևաչափով հաջորդ նիստն անցկացնել 2027թ. փետրվարի 23-24-ին Հայաստանի Հանրապետությունում:

- Որոշվել է ՀՄՆԿ 31-րդ Գլխավոր համաժողովն անցկացնել 2027թ. հունիսի 22-24-ը Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետությունում, որի շրջանակում Հայաստանի Հանրապետությունը ստանձնելու է ՀՄՆԿ Նախագահությունը:

Միաժամանակ, ՀՄՆԿ Գործադիր խորհրդի նիստին ՀՀ ՊԵԿ ներկայացուցիչների մասնակցությունը հնարավորություն ընձեռեց առավել ակտիվ ներգրավվելու ՀՄՆԿ աշխատանքներում և համապատասխան դիրքը ձեռք բերելու նաև Եվրոպական երկրների շարքում՝ նպաստելով ՀՀ ՊԵԿ օրակարգային առաջնահերթությունների առաջխաղացմանը՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ՀՀ-ն 2027–2028թթ-ին ստանձնելու է ՀՄՆԿ նախագահությունը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Էդուարդ Հակոբյան

30.09.2026թ.